ԳԻՏԱԺՈՂՈՎ ՍԵՎԱՆԻ ՎԱՉԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Ապրիլի 10-ին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում տեղի ունեցավ Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակին նվիրված գիտաժողով՝ «Անձի հոգևոր խորհուրդը և նրա հոգեբանական էությունը» թեմայով: Գիտաժողովի նպատակը հոգևորի և հոգեկանի մասին գիտական, օբյեկտիվ պատկերացում կազմելն էր:

Գիտաժողովին մասնակցում էին Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաներ, Երևանի Պետական Համալսարանի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական և Մ. Մաշտոցի անվան համալսարանների, ինչպես նաև Սանկտ Պետերբուրգի մենեջմենտի և իրավունքի ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի հոգեբանության ֆակուլտետի ուսանողներ, դասախոսներ, Մայր Աթոռի միաբաններ:

Գիտաժողովը բացվեց Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսչի պաշտոնակատար Տ. Մը-կրտիչ աբեղա Պողոշյանի խոսքով: Հարց ու պատասխանով, բուռն քննարկումներով ուղեկցվող գիտաժողովի ընթացքում դպրանոցի սաները ներկայացրեցին խոսքի նշանակությունը Աստվածաշնչում, աղոթքի, երազի և զղջման հոգևոր ու հոգեբանական նշանակությունները, ընտանիքի քրիստոնեական ըմբռնումը: Բուհերի ուսանողները զեկուցումներ կարդացին ներընտանեկան բախումների, ագրեսիայի, ֆրեյդիզմի, կյանքի և մահվան հոգևոր և հոգեբանական խորհրդի ու իմաստի մասին: Իսկ հոգու, անմահության, հավատքի հոգեբանական դերի մասին հարցերին պատասխանեցին ներկա հոգևորականները և հոգեբանները:

Սա երկրորդ նմանատիպ գիտա-գործնական կոնֆերանսն էր Վազգենյան Հոգևոր Դպրանոցում: Ուսանողները նշեցին, որ հոգեբանական և հոգևոր գիտելիքի համադրումն օգնեց գտնել շատ հարցերի պատասխաններ: Կոնֆերանսի ընթացքում շեշտվեց անձի խորհրդի հոգեբանական և աստվածաբանական մեկնաբանման կարևորությունը և այդ հիմքի վրա՝ ապագա հոգեբանների ու աստվածաբանների սերտ համագործակցությունը:

Գիտաժողովն ավարտվեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանի օրհնության խոսքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ